ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆ
(Գեորգ Զ. Կարոզիկոս)

ՁՂՋՈՒՄՆ

«Աչք իմ յամենայն ժամ առ Տէր են,
և նա հանէ յորոգայթէ զոտս իմ»:
ՍԱՂՄ. ԻԴ 15:

Մեր կյանքը ալիքանման է ընթանում. մենք նման ենք ալեկոծ ծովի վերա ընկած մակույկի. որ մե՛րթ՝ ծովի կատաղի ալիքների հետ դեպի վեր, դեպի երկինք է խոյանում, և մե՛րթ՝ նորա ուժասպառ կոհակների հետ դեպի վար՝ ծովի անդունդը սուզվում:

Մեր կյանքը ելևէջներով է ընթանում. մե՛րթ՝ ելնում ենք կյանքի բարձր ամբիոնի վերա ու մեր գործերով հիացում պատճառում և՝ մեր Տիրոջը և՝ մեր շրջապատին, և մե՛րթ էլ՝ կյանքի անդունդը իջնում, ենթած տղմի մեջ խրվում, և՝ Տիրոջը և՝ մեր շրջապատին վիշտ ու զզվանք պատճառում:

Ե՛վ այս և՝ այն վիճակը բնական է մարդու համար. բնությունն ու մարդկային կյանքը յուր փարքամ ու նոխ վայելչներով, որպես մագնիս դեպի ինքն է քաշում մարդուն, որ յուր կրքերով, յուր թույլ նյարդերով տարամադիր ու ենթակա է նրապույրների, որոնք՝ փշերի ու տատասկի նման՝ հաճախ խեղդում են իրենց մեջ ընկած բարի սերմերը:

Կարևոր է համբա գտնել ասվածային բանկարժեք պարգևը՝ մեր հոգին, մեր խիղճը մարմնի խեղդող ճիրաններից ազատելու, ապականությունից՝ բարոյական մահից զերծ պահելու համար:

Կարևոր է մի ույժ գտնել, որ մեզ՝ մագնիսի նման՝ դեպի ինքը ձգելով՝ գլորումից զերծ պահե և կամ արդեն իսկ գլորվածին անդունդից հանե, բարձրացնե:

— Ո՞րն է այդ ույժը, ո՞վ է այդ մագնիսը: Սաղմոսերգու Դավիթը՝ Աստուծո ընտրյալ, թագավորն ու մարգարեն, որ սակայն հաճախ ենթակա է եղել յուր մարդկային բնության թուլության և ընկել կյանքի տղմի մեջ՝ նա՛ է, որ գտել է նաև ապականության տղմից դուրս ելնելու համար, երբ ասենք՝ «Աչք իմ յամենայն ժամ առ Տէ՛ր, և նա հանէ յորոգայթէ զոտս իմ»: Ուրի՞ աչքը... Դավի՛թ, դու չէի՞ր, որ Ուրիային փղշտացոց դեմ վարած կատաղի պատերազմի հրդեհի մեջ հշեցիր ու անօգնական թողիր, որ մեռնի և տիրանաս նորա գեղեցիկ կնոջը՝ Բերսաբեին. նա՝ որպես հերոս քաջաբար կռվեց, մարմնով մեռավ, հոգով կենդանի մնաց, իսկ դո՛ւ մեղկացար, մեղքի գերի դարձար ու հոգով մեռար, մարմնով կենդանի մնացիր: Սակայն գիտե՛մ, և դուն էիր, որ այրված սիրտդ բացիր Տիրոջդ առաջ և հոգուդ խորքից գոչման մրմունջներ ուղղեցիր նորան՝ «Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ». և Աստված ողորմեց քեզ: Այո՛, իրավունք ունիս ասելու՝ «Աչք իմ յամենայն ժամ առ Տէր, և նա հանէ յորոգայթէ զոտս իմ»:

Տերն է, եղբայրնե՛ր և քույրե՛ր, այն ույժը, որ դեպի ինքն է քաշում մեր հոգին, մեր խիղճը՝ և մեզ անկումից զերծ պահում և կամ արդեն իսկ գլորվածներին անդունդից վեր հանում:

Քանի փոքր էի, կարծում էի թե՝ սոսկական մարդուն են միայն հատուկ կյանքի ելևէջները՝ գլորումն ու կանգնումը, մեղքն ու զղջումը.

այժմ հավատի եմ, որ այդ ելևէջները հատուկ են նաև Աստուծո ընտրյալներին, որոնցից երկուսի՝ Պետրոսի և Հուդայի անկման ու զղջման նկարագիրը պիտի տամ, որ տեսնեք և իմանաք թե՝ ի՞նչպես մարդ ընդունակ է փառքից, բարձրությունից ընկնել և սակայն վերածնվել ու կրկին բարձրանալ, ինչպես էր Պետրոսը. և կամ ընկնել անդունդը ու հավիտյան մեռնել, ինչպես էր Հուդան:

ա. ՊԵՏՐՈՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.— Պետրոս առաքյալը ապառաժի նման հաստատուն հավատ ուներ և նվիրված էր Տիրոջը: Նա՝ էր, որ աստվածային բարձր շնորհի արժանացավ՝ լսելով Փրկչի խրախույսը թե՝ «Դու՝ ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ»: Նա՝ այդ ապառաժ հավատ ունեցող Պետրոսն էր, որ համարձակություն ունեցավ յուր դավանանքը արտահայտել՝ Փրկչի հարցին ի պատասխան՝ «Դու ես Քրիստոսն, Որդի Աստուծոյ կենդանւոյ»: Նա էր, որ՝ անձնվիրության և կատարյալ սիրո օրինակ հանդիսանալով՝ խոստացավ Տիրոջը հետ բանտ նստել ու մեռնել՝ «Տէ՛ր, ընդ քեզ պատրաստ եմ և՛ ի բանտ և՛ ի մահ երթալ» (Լուկ. ԻԲ 33):

Նա էր աշակերտներից քաջարին, որ Գեթսեմանի պարտիզում յուր Տիրոջ պաշտպանության համար՝ աներկյուղ սուր հանեց նորա թշնամիների դեմ և Մատրոսի ականջը կտրեց, որոնք եկել էին Հուդայի առաջնորդությամբ Հիսուսին բռնելու:

Սակայն և եթե մեկը կար աշակերտների մեջ, որի գլորումն ու անկումը մեծ եղավ, դա նույնպես Պետրոսն էր:

Նա, վերջին գատկական սեղանի վերա հրապարակավ և հանդիսավոր երդվեց յուր Տիրոջը թե՝ քեզ չեմ ուրանա, եթե մինչև իսկ կյանքս զոհելու կարիք լինի՝ չամաչեց և քանանայապետի աղախնի ու ծառաների առաջ ո՛չ միայն ուրացավ, այլև անեծք ու նզովք թափեց նորա գլխին:

Արդյոք կարելի՞ է ավելի մեծ բարոյական անկումն պատկերացնել, քան թե սիրած աշակերտի սուտ ուրացումը յուր Վարդապետին: Օվ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Ծառաների ու աղախինների ծաղր ու սպառնալիք, մի փոքրիկ փորձություն, որին ենթարկվեցավ Պետրոսը, բավական էր խախտելու նորա հավատը: Տե՛ր իմ, ո՞րքան շնչին բան է պետք մարդու, մինչև իսկ ընտրյալ մարդու սիրտը բարոյական բարձրությունից իջեցնելու և անդունդը գլորելու համար:

Սակայն որքան մեծ է Պետրոսի հանցանքն ու գլորումը, նույնքան վեհ է նաև նորա զղջումն ու կանգնումը՝ «Տերը դարձավ, նայեց Պետրոսին, հավը խոսեց և Պետրոսը հիշեց Հիսուսի խոսքը թե՝ դեռ հավը չխոսած երիցս կուրանաս ինձ և դուրս գալով՝ դառնապես լաց եղավ»:

Մի հայացք, Փրկչի մի լուռ հայացք միայն, որ արտահայտում էր լուռ հանդիմանություն և վշտոտ սեր՝ բավական եղավ Պետրոսին զգալ տալու, որ նա յուր Տիրոջը՝ յուր Վարդապետին մեծ վիշտ է պատճառել, բավական եղավ յուր հանցանքը զգալու և զղջման աղի արցունքներ թափելով՝ զգաստանալու:

Այդ լուռ հանդիմանությունը խոր խոցեց Պետրոսի զգայուն սիրտը, զարթեցրեց նորա նիրհած խիղճը և հարություն տվավ նախկին Պետրոսին, որ անձնվիրության և սիրո օրինակ էր:

Ահա սիրելի՛ք, նշմարիա զղջումը, որ ո՛չ պատիժների և ո՛չ էլ աստվածային անեղ դատաստանի սպառնալիքների արգասիք էր, այլ Ս. Հոգու խաղաղ ներգործության ծնունդ, Տիրոջ սիրո հայացքի հետևանք, որ ընկնելով մարդու հոգու մեջ՝ մաքրում և ազնվացնում է սիրտը, զարթեցնում նիրհած խիղճը և՝ սեր ներշնչելով՝ սեր է որոնում այնտեղ:

բ. ՀՈՒԴԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՏԸ.— Պետրոսի հանդեպ կանգնած է Հուդան. առնենք նորա դեմքի մութ ֆոնը, բանանք նորա սիրտը և տեսնենք այդ կորուսյալ որդու պատկերը: «Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատնեացն զնա, թէ պատուհասեցաւ, զղջացաւ: Տեսանո՞ւմ եք, Հուդան էլ է ցավում, որ շատ է խորացել: Նորա մեջ էլ, կարծես, զարթնել է լավագույն էությունը. նա էլ է կամենում զղջմամբ կատարված արարքը սրբել, սակայն ե՞րբ.—երբ տեսավ, որ Հիսուս մահվան դատապարտվեցավ. երբ հավատացավ, թե հուսախաբված է: Նորա զղջումը յուր գործած հանցանքի գիտակցության ծնունդ չէ, այլ հանցանքի անեղ հետևանքի արգասիք: Հուդայի վիշտն ու զղջումը յուր կատարած չար արարքի՝ յուր Վարդապետի մատնության համար չէ. այլապես նորա զղջումը շատ առաջ՝ Գեթսեմանի պարտեզում տեղի կունենար, երբ Հիսուսի հանդիմանական հայացքը անշուշտ թափանցեց Հուդայի սիրտը և նորա ներքին աշխարհը ալեկոծեց, երբ Հիսուսի հեգնությամբ լի կրակոտ խոսքերը՝ «Յուդա՛, համբուրելո՞վ մատնես զորդի մարդոյ», տաղեցին անշուշտ Հուդայի սիրտը: Նորա զղջումը տեղի կունենար խորհրդավոր ընթրյաց ժամանակ, Հիսուսի վշտոտ գուշակությունը լսելիս թե՝ «Ձեզնից մեկը պիտի մատնի ինձ»: Այս բոլորից հետո Հուդան ամբողջ հոգով պիտի հուզվեր, ծուռ իջներ Փրկչի առաջ և զղջման դառն

աւցուեմեներ թափեր, եթե, հիրավի, գոնե փոքրիկ վիշտ զգար յուր անպատկառ արարքի համար: Ո՛չ, Հուդայի զղջումը հանցանքի գիտակցությունից բղխած զղջում չէր. յուր բարոյական անկման վիշտը, յուր հոգու փրկության հոգսը չէր նորան շփոթեցնողը, այլ յուր արարքի անակնկալ վախճանը, յուր ծրագրերի և ակնկալությունների խորտակումը և յուր կատարյալ հուսախաբությունը: Չէ՛, Հուդա՛, զուր անցավ Հիսուսին երկրավոր բազավոր տեսնելու հույսդ և քո նորա աջ կողմը բազմելու տենչդ:

Ասացե՛ք, սիրելի՛ք, մի՞թե մեր զղջումն էլ, նույնիսկ դառնագինը, Հուդայի զղջման չէ նմանում. զղջումն արարքի տհարկու հետևանքի և ո՛չ արարքի համար: Այո՛, հեշտասերը զղջում է յուր վարած ցոփ կյանքի համար, բայց ե՞րբ. երբ նորա առողջությունը քայքայված է, ոսկրների ծուծը լափված և ինքը գերեզմանի եզրին կանգնած:

Խաբեբան ողբում է յուր հանցանքները, բայց ե՞րբ. երբ սուտը հրապարակ է գալիս, և ամոթն ու պատիժը առաջը ծառանում:

Ոճրագործը զղջում է, բայց ե՞րբ. երբ արդարության բազուկների մեջ հմլված է:

Հուդայի զղջումը. սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեզ չի օգնի. երանի՞ նորան, ով հավի խոսելիս խղճի խայթ զգա. երանի՞ նորան, ով Փրկչի հայացքը յուր վերա դարձնե՝ զարթեցնելով յուր ճիրճած խիղճը՝ ասվածային ձայնը:

Տե՛ր, հոգիդ հավատարիմ հովի՛վ, Դո՛ւ, որ շնորհ ունես դասալիքների, ողորմություն՝ մոլորյալների և սեր ու քաղցր հայացք՝ քեզ մոռացողների համար, մեզ էլ խնայի՛ր, մեզ էլ ողորմի՛ր և շնորհի՛ր սաղմոսերգուի սիրտը, որ միշտ քեզ նայենք ասելով՝ «Աչք իմ յամենայն ժամ առ Տէր, ե նա հանէ յորոգայթէ զոտս իմ».ամեն:

(Խոսված 1919 թվի Մաղկազարդի կիրակի Երևանյան՝ Ա. Էջմիածնի Մայր Տաճարում)։